

ԽՈՐԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՍՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱՅՈՈՒՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ
ԷԶՄԻԱԾՆԻ ՇՆՈՐհազարդ Տ. Սահակ Բ. Կաթողիկոսի Տանն Կիլիկիոյ,
Ամենապատիւ Պատրիարքի Առաքելական Աթոռոյն Ս. Յակոբեանց Երուսա-
ղէմի Տ. Թորգոմ Արքեպիսկոպոսի, Ամենապատիւ Պատրիարքի Կ. Պօլսոյ
Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոսի, Գերաւանորն Արքեպիսկոպոսաց, Գերապա-
տիւ Եպիսկոպոսաց, Առաջնորդաց եւ Տեսչաց Առաքելական Սուրբ եւ
Ուղղափառ Եկեղեցեացս Հայաստանեայց եւ Համայն Հոգեւոր Ուխտի
Հովուաց եւ Սրբազնագոյն Պատօսելից Հայ Հաւատացեալ Հօտին Քրիստո-
սի, Պատկանելի Երեսփոխանական Ժողովոց եւ Կեդրոնական Վարչու-
թեանց Թեմօրէից ընդ Ամենայն Աւետարհս եւ Պետութիւնս, Ողջոյն Յիսու-
սաւանդ եւ Սրաքողիս Օրհնութիւն ի Հայրապետէս Հանուրց Հայոց եւ
յԱթոռակալէս Առաջին Լուսաւորչացն Մերոց Սրբազան Առաքելոցն Թաղե-
սի եւ Բարդուղիմէոսի եւ Բազմեաթիս Հօրն Մերոյ Սրբոյն Գրիգորի Առա-
քելապատիւ Հայրապետին եւ Երկրորդ Լուսաւորչին Հայաստան Աւետարհի:

Շնորհ, Սէր եւ Խաղաղութիւն, Աստուածային Այցելութիւն եւ Երկ-
նային Ողորմութիւն Հանգիցէ ի վերայ Զեր, ի վերայ Ազգիս Հայոց եւ
Հայաստան Աւետարհիս:

Հիմունք քրիստոնէական կրօնից, դաւանութեան հաւատոյ, խորհրդոց
եկեղեցւոյ եւ կարգաց ձեռնադրութեան եղեալ են ապաքին ի վերայ արքոյ
Առեւտարանին Քրիստոսի, գործոց եւ քարոզութեանց արքոյ առաքելոց, եւ ըս
նոցանէ սահմանադրութեամբք երկց տեղեւական ժողովոց, որք ի Նիկիայ,
ի Կոստանդնուպօլիս եւ յերեսնոս գումարեցան: Ի վերայ հիմանց եւ սահ-
մանադրութեանց այսոցիկ՝ կառուցեալ են ամենայն եկեղեցիք ուղղափա-
նաց, դոյզն ինչ իսրաւ ի մէջ նոցա, եւ կան մեան անկեղծիք եւ անդրդուե-
լիք միւնչեր ցայսօր ժամանակի, յորոց սակի եւ Սուրբ Եկեղեցին Հայա-
ստանեայց: Այլ եւ ինչ արտաքին սոցա են յօրհնուածք եւ դրուագք եկեղեցւոյ,
այն ամենայն առ սակաւ սակաւ կազմեցան յընթացս դարոց՝ ըս պիտո-
յից եւ հանգամանաց մէն մի ազգային եկեղեցւոյ՝ ի ձեռն եկեղեցական
ժողովոց միոյ միոյ ազգի, որպէս ժամք եւ կարգք աստուածապաշտութեան,
երգեցողութիւնք եւ աղօթք, տոբք եւ յիշատակք արքոց, սահմանումն աւուրց
պակոց եւ ոտեաց, կարգ հասից եւ չհասից, յարգութիւն պատկերաց արքոց,
ծէսք օրհնութեան եւ ձեռնադրութեան, այլովք բազմօք հանդերձ, որք ըս
քերականց յարափոփոխ ժամանակաց՝ փոփոխին եւ փոփոխելիք են տակաւ,
որպէս պահանջեն հարկ ժամանակին: Քանզի կենդանի եկեղեցի Քրիստոսի
նոյն ինքն է բազմութիւն հաւատացելոց, որ զպէս իւր եւ զկարիս ի մա-
սին հաւատոյ՝ ինքնին գիտէ եւ տեսնէ՝ հաւանութեամբ անդամոց նորին,
օրինաւոր կարգաւ, ըս սահմանելոյ եկեղեցական ժողովոց:



Ընդ առին օրինակի եւ եկեղեցի մեր սուրբ անդուս ի սկզբանէ փառեցաւ, հոգեբույս եւ շնորհալից փառապետք եւ հայրապետք պաշտօնացին եւ զարդարեցին զկարգ աստուածապաշտութեան աղօթիս եւ երգով հոգեւորօք, սահմանեցին տուն եւ հանդես եկեղեցւոյ: Ըստ բերման հարկի գումարէին եկեղեցական ժողովք յոխտե՛ եկեղեցւոյ եւ յաշխարհիկ դասուն, առ ի քննել զխնդիրս կարեւորս զիրաց հաւասոյ, զիրաւանց եւ պարտոց հոգեւոր պաշտօնէից, զամուսնութեանց եւ զամուսնալուծութեանց եւ զայլոց բազմաց: Ըստ այսմ կարգի եւ կարիք եկեղեցւոյ համապագ յուշի էին երանաշնորհ հարց եւ հովուապետաց եկեղեցւոյ, որք կարգաւորեցին զամենայն ըստ հանգանակաց իւրաքանչիւր ժամանակի:

Բայց յեղափոխ դիպումս պատմական, պատերազմումս եւ արշաւանք, որք կողմ զկնի միմեանց ի վերայ եկեալ խռովելն զաշխարհս մեր եւ ի վերջին դարս բռնութիւնք իշխանութեանց, որք տրեխն մեզ, խոյրեղոս եղեւ կանոնաւոր ընթացից գործոց եկեղեցւոյ, փասն որոյ խախտմեցան ժողովք եկեղեցական եւ խանգարեցան բազում ինչ կարգք սահմանեալ յառաջագոյն, մոծան սովորութիւնք անուանող եւ առհասարակ խորքնացաւ բարեգործութեան բեւեռին:

Այլ ի ժամանակի աստ մերում, իբրեւ ըստ օրինաց Խորհրդային Իշխանութեան անցաւ եւ Պետքիւնն յեկեղեցւոյ, եւ յէ ինչ, որ յայնմ տեղեւորեցին ընդ ինչ ըստ կարեւոր հաւասարեալ հօտին տնօրինել զկարիս եկեղեցւոյ, զխորհուրդ բարի ժաղեաց ի Մայր Աթոռույս, դեռ եւս առ կենդանութեամբ հոգեւորս նախորդին մերոյ Տեառն Գեորգայ Ե. Հայրապետի, փոքր յանձնին ունել, բուն հարկանել զբարեկարգութենէ գործոց եւ պաշտանց եկեղեցւոյ ի ձեռն եկեղեցական ժողովոց: Վասն որոյ իբրեւ գումարեցաւ եկեղեցական ժողովք ի սուրբ Էջմիածին յամին 1932, որով անարժանութիւնս Մեր կոչեցաւ յԱթոռ Հայրապետական, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդն զեկոյց ժողովոյն զբազմադիմի կարիս եկեղեցւոյ մերոյ, յորոց ի յումն պէտք են նորոց սահմանադրութեանց ազգային-եկեղեցական ժողովոց:

Ազգային-եկեղեցական ժողովքն հաճ եւ հաւան զսառ առաջարկութեան Գերագոյն Հոգեւոր Խորհուրդն եւ յանձն արար նմին, ընդ նախագահութեամբ Մերոյ, հրապարակելով ի խորհրդակցութիւն եւ անձինս յաշխարհիկ դասուն պատգամաւորացն՝ յօրինել զնախագիծ բարեկարգութեանց եւ փոփոխմանց ի պաշտանունս եկեղեցւոյ, ի տնայացոցի եւ այլն եւ առաքել զայն առ Շնորհազարդ Կաթողիկոսն Տանն Կիլիկիոյ, առ Ամենապատիւ Պատրիարքս Հայոց Ս. Երուսաղէմի եւ Կոստանդնուպոլսոյ եւ առ համօրէն Առաջնորդս Թեմից, զի ուշի ուշով առեալ ի քննելն զնախագիծն, մասունքանիցն զկարծիս իւրեանց, զմիոյ միոյ կէտէ նոր:

Ըստ այսմ հրահանգի Ազգային եկեղեցական ժողովոյն, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդն մեր, հանդերձ արաւթ հետք կարգաց եկեղեցւոյ՝ յօրինեաց զայս ծրագիր բարեկարգութեանց եկեղեցւոյս մերոյ, զոր առաքեալ ընդ այսմ կոնքակի յորդոր կարգաւք առ յծակից եւ գործակից սիրելի եղ-

բարաք Մեր եւ որդիս, ուշի ուշով քննել զայն, իւրաքանչիւր յինչով ոգոյն նորին եւ ի մեծ եղեալ զօգուսն եկեղեցւոյ, զկարծիս ժողովրդեանն եւ ըզհանգանակս ժամանակի՝ եւ զկարծիս իւրաքանչիւր առաքել առ հաւասարինն եկեղեցւոյս մերոյ եւ Մայր Աթոռույս, առ Ամենապատիւ Պատրիարքն Առաքելական Աթոռոյն Սրբոց Յակոբեանց Երուսաղէմի Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ, որպէս ներկայացուցի Մերում ի սիրտս եւ ղեկավարի գործոյս, որոյ ժողովեալ զամենայն դիտողութիւնս ի տեղեաց տեղեաց, զողջն հասունցէ ի ձեռն Մեր եզրակացութեամբ իւրով, փասն փախճանական իւրաքանչիւրութեան ծրագրին:

Չէ ինչ անդէպ, երբ զոյգ ընդ Առաջնորդս եւ Խորհուրդս Թեմից, ի գործ քննութեան այս ծրագրի զբաղնուցում եւ արք աշխարհիկ, սիրող եկեղեցւոյ եւ նախանձաւորք բարեկարգութեան նորին:

Յուսամք թէ Առաջնորդք Թեմից, հոգեւոր հովիւք, քանակայ, առաջաւորք ազգիս, քեմական երեսփոխական ժողովք եւ Կեդրոնական Վարչութիւնք արքութեամբ կատարեցեն զպարսիս իւրեանց, առաւել եւս յուսամք թէ զերադաս Աթոռականք նախապետութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, սիրելի յծակից եղբարք Մեր Շնորհազարդ Տ. Սահակ Բ. Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ եւ Ամենապատիւ Պատրիարք Կ. Պօլսոյ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս, փորձառու եւ իմաստուն խորհրդովք իւրեանց աստար յիցին ըստ ամենայնի յծակից եղբօր եւ ներկայացուցի Մերում ի սիրտս՝ Պատրիարքի Առաքելական Աթոռոյս Սրբոց Յակոբեանց Երուսաղէմի, Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոսի, արդիւնաւորել զպաշտօնն յանդասանի ընդհանուր եկեղեցւոյս:

Օրհնելով զՁեզ զամենեւեւանք, մաղթելք ի Տեառնէ զօրացումանք եւ արիացումանք զՁեզ առ ի կատարել ըստ արքական կոչման Ձերում ըզպարսիս Ձեր առ Հայաստանեայց Ս. եկեղեցին, առ Ազգն մեր տառապեալ եւ առ Հայրենիս Մեր:

Ողջ լերումք, զօրացեալ շնորհիւք Սուրբ Հոգւոյն եւ յաւե տնայալ ի Մենք, Ամեն:

ԽՈՐԷՆ Ա.

ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ ԿԱԹՈՒԼԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 1-6 Օգոստոսի 1937 թ. ամի

Ըստ Տնօրէնի ՌԵՁԷ:

Ի Հայրապետութեան Մերում Ե. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ի Վարչապետական
Թ. 417

Յանձնարարեմք Ընդհ. Փոխանորդին Մերում Գերաշնորհ Տ. Պետրոս Արքեպիսկոպոսի, ապա բազմազբել զայս Կոնգակ և յղել Սրբազան Թեմականաց մերոց հանգերձ զեկուցազրուիք, զի խորհրդակցութեամբ ժողովականաց Թեմօրէից առ մեզ հասուցեն զկարծիս և զթելադրութիւնս իւրեանց:

ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՒԼԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈՑ

Ի 1-6 Սեպտեմբերի 1937 թ. ամի



1205-2010



ՀՀ Ազգային գրադարան



NL0614022